Պատմություն և մշակույթ
History and Culture

2024 № 21 (2)

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.251

The Monuments of the 44-day War in the Everyday Life of RA Border Settlements

Lusine Angelush
https://orcid.org/0000-0003-4072-7813IAE
Institute of Archaeology and Ethnography NAS RA, senior assistant
lusineangelush@gmail.com

Keywords: war, monument, everyday life, border settlement, commemorative practices, collective participation, identity.

Memory plays a very important role in ethnopolitical conflicts, since public perceptions and ideas about the conflict, explanations of the justice of the struggle for the protection or liberation of one's homeland are built on the basis of historical and cultural memory. Monumental landscapes are powerful physical manifestations of cultural memory, acting as carriers of historical narratives, expressing social values and ideas about building the future. But defeat in war, territorial losses and an uncertain future may challenge dominant narratives of cultural memory, which may manifest itself in the emergence of new practices of memorialization and commemoration. These processes are particularly expressed in border settlements. This article examines the issues of rethinking cultural memory and commemoration practices in Armenian border settlements using the example of monuments from the Second Artsakh War.

The article analyzes the histories of heroization and sanctification that shape cultural memory, as well as the processes of their reproduction, modification and contestation in the everyday life of society through monuments.

In this context, we considered the actors in the formation of the monumental landscape, the place of installation of monuments and the role of these structures in the daily life of border settlements. The problem is discussed within the framework of sociological, anthropological and psychological theories studying the problems of individual and collective memory, ethnic and national identity and everyday life.

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 251-262.

Received: 23.09.2024
Revised: 05.10.2024
Accepted: 23.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Within the framework of the topic, research was conducted in regional centers and border settlements of Syunik, Vayotsdzor, Gegharkunik and Tavush districts of the RA, bordering Azerbaijan, using the methods of in-depth and expert interviews, observation and content analysis of Internet materials.

44-օրյա պատերազմի հուշարձանները ՀՀ սահմանամերձ բնակավայրերի առօրյայում[1]

Լուսինե Անգելուշ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ավագ լաբորանտ

Հիմնաբառեր՝ պատերազմ, հուշարձան, առօրյա, սահմանամերձ բնակավայր, հիշատակման պրակտիկաներ, կոլեկտիվ մասնակցություն, ինքնություն:

Հիշողությունն անչափ կարևոր դեր է խաղում էթնոքաղաքական հակամարտություններում, քանզի հակամարտության վերաբերյալ հանրային պատկերացումներն ու ընկալումները, սեփական հայրենիքը պաշտպանելու կամ ազատագրելու պայքարի արդարացիության բացատրությունները կառուցվում են պատմական և մշակութային հիշողության հիմքի վրա: Մշակութային հիշողության ազդեցիկ ֆիզիկական դրսևորում են հանդիսանում հուշարձանային լանդշաֆտները, որոնք հանդես են գալիս որպես պատմական պատումների կրողներ, հանրային արժեքներ արտահայտողներ և ապագայի կառուցման մասին գաղափարներ արտադրողներ: Սակայն պարտությունը պատերազմում, տարածքային կորուստները և ապագայի անորոշությունը կարող են հարցականի տակ դնել մշակութային հիշողության դոմինանտ պատումները, որը կարող է դրսևորվել հուշարձանացման ու հիշատակման նոր պրակտիկաների ի հայտ գալով: Այս գործընթացներն առավել արտահայտիչ դրսևորում են ստանում հատկապես սահմանամերձ բնակավայրերում:

Սույն հոդվածը քննարկում է մշակութային հիշողության և հիշատակման պրակտիկաների վերաիմաստավորման խնդիրները հայաստանյան սահմանամերձ համայնքներում՝ Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանների օրինակով: Վերլուծվում են մշակութային հիշողությունը ձևավորող հերոսականացման և սրբազնացման պատումները, դրանց վերարտադրման, փոփոխման ու վիճարկման գործընթացները համայնքային առօրյայում հուշարձանների միջոցով: Այս

[1] Ուսումնասիրությունն իրականացրել ենք «Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը և հեռանկարի ուրվագծումը» (ծածկագիր՝ 21T-6A136) ծրագրի շրջանակներում՝ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ:

համատեքստում կարևորել ենք դիտարկել՝ հուշարձանային լանդշաֆտի ձևավորման դերակատարներին, հուշարձանների տեղադրման վայրերը և այդ կառույցների դերակատարումը սահմանամերձ համայնքների առօրյայում:

Խնդիրը քննարկվում է անհատական և կոլեկտիվ հիշողության, էթնիկ ու ազգային ինքնության և առօրեականության խնդիրներն ուսումնասիրող սոցիոլոգիական, մարդաբանական ու հոգեբանական տեսությունների շրջանակներում:

Թեմայի շրջանակներում հետազոտություն է իրականացվել Ադրբեջանին սահմանակից ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի մարզկենտրոններում և սահմանամերձ համայնքներում՝ կիրառելով խորին և փորձագիտական հարցազրույցների, դիտման և համացանցային նյութերի բովանդակային վերլուծության մեթոդները:

Памятники 44-дневной войны в повседневной жизни пограничных населенных пунктов РА

Лусине Ангелуш
Институт археологии и этнографии НАН РА, старший лаборант

Ключевые слова: война, памятник, повседневная жизнь, пограничный населенный пункт, коммеморативные практики, коллективное участие, идентичность.

Память играет очень важную роль в этнополитических конфликтах, поскольку общественные восприятия и представления о конфликте, объяснения справедливости борьбы за защиту или освобождение своей Родины строятся на основе исторической и культурной памяти. Влиятельным физическим проявлением культурной памяти являются монументальные ландшафты, которые выступают носителями исторических повествований, выражают общественные ценности и идеи о построении будущего. Но поражение в войне, территориальные потери и неопределенность будущего могут поставить под сомнение доминирующие нарративы культурной памяти, что может проявиться в появлении новых практик мемориализации и коммеморации. Эти процессы особенно выражены в приграничных населенных пунктах.

В данной статье на примере памятников Второй Арцахской войны рассматриваются вопросы переосмысления культурной памяти и практики поминовения в армянских приграничных населенных пунктах.

Анализируются истории героизации и освящения, формирующие культурную память, а также процессы их воспроизведения, модификации и оспаривания в повседневной жизни общества через памятники.

В этом контексте мы рассмотрели действующих лиц формирования монументального ландшафта, места установки памятников и роль этих сооружений в повседневной жизни приграничных населенных пунктов.

Проблема обсуждается в рамках социологических, антропологических и психологических теорий, изучающих проблемы индивидуальной и коллективной памяти, этнической и национальной идентичности и повседневной жизни.

В рамках темы были проведены исследования в региональных центрах и приграничных населенных пунктах Сюникской, Вайоцдзорской, Гегаркуникской и Тавушской областей РА, граничащих с Азербайджаном, с применением методов глубинных и экспертных интервью, наблюдения и контент-анализа материалов Интернета.

* * *

Ներածություն: ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր ՀՀ հիշողության քաղաքականությունը ձևավորվել է ազգային հիմնական պատումների՝ Ցեղասպանության, ազատագրական պայքարի ու Արցախյան պատերազմում հաղթանակի հիշողությունների շուրջ [Խառատյան, Շագոյան, 2022, 4-5]: Այս պատումների շուրջ կառուցվող ազգային ինքնությունը անկախության տարիներին կազմակերպվել է ինքնության խորհրդանշանների տարածման միջոցով: Արդյունքում, հետխորհրդային Հայաստանի բնակավայրերում (վերա)ստեղծվել են հիշողության լանդշաֆտներ, որտեղ անցկացվում են պետական տոներ ու ծեսեր և հիշատակման արարողություններ, վերարտադրվում են պատմական պատումները, ազգային արժեքներն ու հուսալի ապագայի կառուցման մասին պատկերացումները [Մելքումյան, 2017, 46]:

Այնուհանդերձ, ինչպես պատմական հիշողությունը, այնպես էլ ազգային ինքնությունը ստատիկ ու քարացած երևույթներ չեն, այլ ենթակա են փոփոխությունների, որոնք կարող են և՛ ներքին, և՛ արտաքին զարգացումների արդյունք հանդիսանալ: Պարտությունը Արցախյան երկրորդ պատերազմում, կորսված տարածքներն ու բազմաթիվ զոհերն ու տեղահանվածները և ճգնաժամային իրավիճակը, որում հայտնվել է ՀՀ-ն ու դրանցով պայմանավորված ապագայի անորոշությունը կասկածի տակ են դրել մինչպատերազմական շրջանում գործող ռազմաքաղաքական, սոցիալ-մշակութային արժեքները, գաղափարները, ձևավորված պատմական առաջնային պատումները: Խնդիր է առաջացել նաև գնահատական տալու 44-օրյա պատերազմին ու հասկանալու դրա դերը ՀՀ հիշողության լանդշաֆտում:

Այս ամենն առավել սուր դրսևորում է ստանում հատկապես ՀՀ սահմանամերձ համայնքներում, որոնք ունեն անվտանգային խնդիրներ ու կանգնած են իրենց «փոքր հայրենիքի» կորստի վտանգի առջև: Նման համայնքներում, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, շատ հաճախ նկատելի է ազգային ու լոկալ ինքնության պատումների ակտիվ շրջանառում բնակավայրերի առօրյայում:

Եթե ՀՀ իշխանությունները Ադրբեջանի հետ սահմանամերձ բնակավայրերում հիմնականում բավարարվեցին պատերազմում զոհվածների գերեզմանների կամ լոկալ պանթեոնների կառուցման ֆինանսավորմամբ, ապա տեսնում ենք, որ զոհերի հարազատները՝ ընտանիքի անդամները, ընկերները, հարևանները, ուսուցիչները, իրենք նախաձեռնեցին հուշարձանների տեղադրում՝ բերելով իրենց կորուստը հանրային միջավայր:

Թեև պատերազմի ավարտից անցել է ընդամենը 4 տարի, իսկ զոհերի հուշարձանների տեղադրումը դեռևս ավարտված գործընթաց չէ, այնուամենայնիվ արդեն հստակ կարելի է ուրվագծել ՀՀ սահմանամերձ բնակավայրերում զոհերի հուշարձանների տեղադրման հիմնական դերակատարներին, նրանց տեղադրության հանրային վայրերը, այդ հուշարձանների շուրջ հիշատակման նոր պրակտիկաների ձևավորումը, հուշարձանների ներառումը համայնքների առօրյայում, նրանց վերագրվող գործառույթները՝ սահմանամերձ համայնքների համախմբման, սերունդների դաստիարակման ու ապագայի կառուցման գործում: Բացի այդ, նաև նշմարելի են համայնքների բնակչության վախերը, ոչ միայն կապված իրենց բնակավայրերը, այլև իրենց զավակների հուշարձանները կորցնելու հնարավոր վտանգի հետ:

Պատերազմի հիշողությունը սահմանամերձ բնակավայրերում: Պատերազմի զոհերի հուշարձանների հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021-2023 թթ. ՀՀ Տավուշի մարզի մարզկենտրոն Իջևան քաղաքում, Կիրանց, Աճարկուտ, Սարիգյուղ, Սևքար, Աչաջուր և Հաղարծին համայնքներում, Սյունիքի մարզի Քաջարան, Կապան, Գորիս և Սիսիան խոշորացված համայնքներում, Վայոց Ձորի մարզում՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ խոշորացված համայնքներում ու մարզկենտրոն Եղեգնաձորում: Գեղարքունիքի մարզում հետազոտություն ենք իրականացրել Մարտունի, Գավառ և Վարդենիս խոշորացված համայնքներում, մարզկենտրոնում, իսկ Արարատի մարզում՝ Մասիս, Արտաշատ ու Արարատ համայքներում ու մարզկենտրոն Արտաշատ քաղաքում: Հետազոտության շրջանակներում 48 փորձագիտական հարցազրույց է իրականացվել ՀՀ Կառավարության ու նրան առընթեր մարմինների ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ու աշխատակիցների, ՀՀ բուհերի, դպրոցների ու մշակութային տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ հետ: Շուրջ 120 խորացված հարցազրույց է

պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման նախաձեռնությունների հեղինակների հետ:

44-օրյա պատերազմի ավարտից հետո ՀՀ իշխանությունների պետական քաղաքականությունն ուղղվեց պատերազմի զոհերի կոլեկտիվ հիշատակմանը՝ ֆինանսավորելով պանթեոնների ստեղծումը, գերեզմանների բարեկարգումն ու զոհերի գերեզմանաքարերի տեղադրումը, Երևանի բուսաբանական այգում «Կյանքի պուրակի» ստեղծումը:

Այս ամենի կողքին սահմանամերձ բնակավայրերում սրված անվտանգային խնդիրները, ձևավորված «փոքր հայրենիքի» կորստի վտանգը բերեցին ազգային ինքնության պահպանման վերարժևորման: Արդյունքում սահմանամերձ բնակավայրերում համայնքը հանդես եկավ որպես պատերազմի մասին հիշողության ստեղծման և փոխանցման հիմնական դերակատար: Այսպես, որպես հուշարձանների տեղադրման նախաձեռնողներ հանդես եկան ինչպես զոհվածների ընտանիքի անդամները, այնպես էլ համայնքի ղեկավարները, բնակիչները, զոհվածի դպրոցի տնօրենը կամ ուսուցիչները, ընկերները:

Պատերազմի զոհերի հուշարձանները հատկապես սահմանամերձ բնակավայրերում կատարում են կրթադաստիարակչական, ազգային ինքնության վերարտադրման և հայրենիքի պահպանության կարևորության փոխանցման գործառույթ, ինչն էլ նպաստեց հուշարձանի տեղադրման հանրային տեսանելի վայրերի ընտրությանը՝ դպրոցների, մանկապարտեզների, համայնքապետարանների, մշակույթի տների հարակից տարածքներ, մանկական խաղահրապարակներ, հանրային զբոսայգիներ, կենտրոնական փողոցներ (սահմանամերձ համայնքների բնակիչների ամենօրյա այցելության վայրեր):

Հանրային միջավայրում հուշարձանների շուրջ ձևավորվեցին հիշատակման նոր պրակտիկաներ և կրկնվող ծեսեր (ծաղկեդրում պատերազմի տարելիցին, քայլերթ հուշարձանից դեպի պանթեոն, դպրոցական հայրենասիրական միջոցառման կազմակերպում և այլն)՝ ներգրավելով համայնքի բնակիչներին և դառնալով համայնքի առօրյայի կազմակերպման կարևոր օղակ:

Պատերազմի զոհերի հուշարձանները՝ որպես «պատմության դաս»: Հիշել՝ նշանակում է անցյալի մի մասը տեղադրել ներկայի հայացքների համակարգի ու կարիքների սպասարկման մեջ [Մարության, 2006, 8]: Պատերազմի մասին պատմական հիշողության ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն այն սոցիալ-մշակութային արժեքների, իդեալների մասին պատկերացումները, որոնք պաշտպանվել են պատերազմի ընթացքում, պատերազմի զոհերի ճանաչումը և դրա հետևանքների գիտակցումը [Поршнева, 2005, 114]:

Վերջին տարիներին մեծանում է անցյալը մոռանալու, ներկայի եռուզեռում այն կորցնելու վախը: Հիշատակման պրակտիկաների դերը կապված է ոչ միայն անցյալի, այլև ներկայի մոռացման, արժեքային կողմնորոշումների, կյանքի իմաստի կորստի վախի հետ [Зубанова, Шуб, 2022, 56]:

Մեր կողմից դիտարկված հուշարձանների շարքում կարող ենք առանձնացնել պատերազմի զոհերի այն հուշարձանները, որոնք կառուցվել են, որպես «պատմության դաս», զոհերի հիշատակը հավերժացնող կառույցներ: Վերջիններս սերունդներին պետք է փոխանցեն հենց այն արժեքները, որոնց կրողները եղել են պատերազմի զոհերը: Այսպես, խոսելով Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղում պատերազմի զոհերին նվիրված հուշասենյակի բացման նպատակի մասին, դպրոցի տնօրենը նշում է.

«*Ոնց-որ մեզանից հետո եկողներին ասենք՝ հիշե՛ք, չեք ճանաչում, չեք տեսել: Էդ հուշասենյակի բացումը ոնց-որ մնա մեր սերունդներին:… Մենյակը չի, որ մեզ ստիպում է հիշենք, խոսենք: Մնայուն ինչ-որ մի բան է, որ հետո հիշեն: Մենք հուշատախտակի բացմանը խոսք ունեինք՝ մեզանից հետո սերունդները հիշեն*» [ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023]:

Նման գաղափար են փոխանցում նաև Սիսիանում տեղադրված հուշարձանի նախաձեռնողները՝ պատերազմում զոհվածի հարազատները.

«Ամենաառաջինը՝ որպես պատմության դաս, սերունդներին փոխանցվող, որ մեր հերոսները և նրանց արածները գնահատվեն, հիշվեն: Առաջին նպատակը դա ա եղել: Ավելի շատ դա, ոչ թե անձնավորելը» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]:

Հուշարձանների տեղադրման նախաձեռնողների հետ հարցազրույցները, հուշարձանների բացման արարողությունների ժամանակ հնչած ելույթների վերլուծությունը թույլ են տալիս խոսել այն մասին, որ պատերազմում զոհված տղաները համայնքի համար դառնում են ինքնության համար պայքարի խորհրդանիշ:

Օրինակ՝ Սիսիանում զոհված զինվորի հիշատակին նվիրված հուշարձանի բացման արարողության ժամանակ զոհվածի քույրը կոչով դիմում է հավաքվածներին՝ իրենց երեխաների մեջ հայրենասիրություն սերմանելու, բայց «*այն հայրենասիրությունը չէ, որ գրքերում է»,* այլ այն, որի կրողը եղել են պատերազմում զոհված զինծառայողները (Վահագն Հովակիմյան հզոր թռիչքիդ անվարան ուղին):

Մյուս կողմից՝ կարևոր է հասկանալ հուշարձանների տեղադրման հիմնական վայրը՝ սերունդների հետ հաղորդակցման շարունակականությունն ապահովելու նպատակով: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել դպրոցների, մանկապարտեզների, զբոսայգիների և մանկական խաղահրապարակների տարածքում տեղադրվող հուշարձանները, որոնք ստեղծում են միջավայր, որտեղ «*հերոսներն ապրում են երեխաների հետ*» [ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022]:

Սիսիան քաղաքում զոհված տղայի հուշարձանի տեղադրման վայրի ընտրության վերաբերյալ զոհվածի հորեղբայրը նշում է. *«Իսկ տեղը, բացի այն, որ մեր տունն ա, մի 100 մետր էն կողմ դպրոցն ա: Ճանապարհին ա, որ երեխեքը գնում են: Թե 10 երեխայից 2-ը էդ աղբյուրից ջուր խմեն, դպրոցում դասատուին հարցնելու են. «Էդ ի՞նչ աղբյուր ա»: Նույնիսկ մի առաջին դասարանի երեխա եկել ա, ջուր ա խմել, խոնարհվել, խաչակնքվել: Այսինքն՝ նպատակին ծառայել ա: Էս տան ապրողները փոխվելու են, բայց նա, որպես դաստիարակող, մնալու ա»* [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]:

Մեկ այլ հուշարձանի մասին զոհվածի ծնողը նշում է. *«Տեղն այնպիսին է, որ դպրոցի ու մանկապարտեզի ճանապարհ է: Մի կողմում Արտաշեսի մանկապարտեզն է, մյուս կողմում՝ դպրոցը: Հենց խորհուրդը դա է»* [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022]:

Բայց երեխաների ծանոթացումը հերոսական պատմություններին չի սահմանափակվում միայն կրթական հաստատությունների տարածքում հուշարձանների տեղադրմամբ: Քաջարանում զոհվածի ծնողը պատմում է, որ դպրոցն ունի նաև բակային ճամբար, որի ջոկատները կրում են հերոսների անունները. *«Ու գիտեք՝ ինչն է կարևոր, որ ուղղակի անունը չեն կրում, երեխաները ծանոթանում են հերոսների կյանքին»* [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022]:

Տեսնում ենք, որ մեր հետազոտության թիրախ դարձած ՀՀ սահմանամերձ համայնքների մեծ մասում այդ բնակավայրերի տարբեր դերակատարների համատեղ ջանքերով տեղադրված հուշարձանները հիմնականում միտված են պատերազմի և նրա արդյունքում համայնքը ներկայացնող զոհերի հիշատակմանը, զոհերի հերոսականացմանը, նրանց սխրանքի փոխանցմանը ապագա սերունդներին: Իսկ ահա տեղադրողների կողմից այդ հուշարձաններին վերագրված կրթադաստիարակչական հիմնական գործառույթի կարևորմամբ է պայմանավորված նաև այդ կառույցների տեղադրության վայրերի ընտրությունը (կրթական հաստատություններ և հարակից վայրեր, այգիներ ու խաղահրապարակներ):

Հուշարձանը համայնքի առօրյայում: Կոնսոլիդացվող յուրաքանչյուր խումբ ձգտում է ստեղծել այնպիսի վայրեր, որոնք իր համար ոչ միայն համատեղ գործունեության հարթակ կդառնան, այլև ինքնության խորհրդանիշներ, հիշողության հենակետեր [Ассман, 2004, 40]:

Դառնալով սրբազան տարածքներ՝ հուշարձանները նաև որոշակի պատասխանատվություն են բերում համայնքի բնակիչների առօրյա: Հարցազրույցների ընթացքում հուշարձանների տեղադրման նախաձեռնողները հաճախ խոսում են ինչպես շինարարական աշխատանքների կատարման ընթացքում, այնպես էլ հուշարձանի տարածքի մաքրության պահպանության ապահովման հարցում համայնքի բնակիչների ակտիվ ներգրավվածության մասին. «*Մարդիկ ուշադիր են, էստեղ վատ չեն պահում: Որ*

մի բան տեսնեն, հաստատ կմաքրեն։ … Երեխաները ոնց-որ շեֆություն ստանձնեն, գալիս են, հետևում են, որ հանկարծ ինչ-որ մեկն անկարգություն չանի» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022]։

Գեղարքունիքի մարզի դպրոցներից մեկի տնօրենի խոսքով. «*Համայնքի շատ-շատ անդամներ իրենց ներդրումն ունեցան՝ թե՛ գաղափարապես, թե՛ աշխատանքով։ Մեկն ասում էր՝ ես քար տաշեմ, քար բերեմ, էսքան «բորդյուր» ունեմ, սալիկ ունեմ։ Հոգատարությունը շատ մեծ էր։ Ու ամեն մեկը, ինչ կարողացավ, օգնեց»* [ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023]։

Հանրային վայրերում հուշարձանների տեղադրումը բերեց դրանց շուրջ հիշատակման նոր պրակտիկաների ձևավորման։ Հուշարձանների տարածքները դարձան ինչպես դպրոցական հայրենասիրական դասերի կազմակերպման վայր, այնպես էլ տոներին կամ հիշատակի օրերին համայնքի անդամների համատեղ միջոցառումների իրականացման կենտրոն։

Սիսիանում զոհվածի մայրը նշում է. «*Գալիս են դպրոցից հայրենասիրության դասեր են անցկացնում ավարտական դասարանի երեխեքը, սեպտեմբերին ծաղիկները ուսուցիչները ստեղ են դնում, մայիսին ստեղ են դնում*» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]։

Ինչպես արդեն նշել էինք, հուշարձանային լանդշաֆտների ձևավորումը բերեց նաև առօրյայում նոր սովորույթների ձևավորման։ Հուշարձանները համայնքում սկսեցին կատարել նաև համախմբող և կորստից հետո համայնքի վերածննդի գործառույթ։ Տավուշի մարզի Աճարկուտ համայնքում, որտեղ հուշարձանը տեղադրված է մանկական խաղահրապարակում, զոհվածի ծնողը ներկայացնում է. «*Ինքը խորոված շատ էր սիրում, հիմա գյուղում էլ ոչ մեկը խորոված չի անում, եթե անում էլ են՝ հեռու անտառներում։ Նոր տարվան ուզում էինք էստեղ սպիտակ լույսեր միացնել, մարդիկ բոլորը ուրախացան ու զարմացան։ Մենք այստեղ միջոցառում արեցինք, ես բոլոր երեխաներին նվերներ առա, մուլտֆիլմի հերոսներին կանչեցինք։ Սրանից հետո գյուղի ու դպրոցի բոլոր միջոցառումներն էստեղ են*» [ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022]։

Գանձակի երաժշտական դպրոցի դիմաց 2021 թվականին բացվեց պուրակ՝ համայնքում 2016 և 2020 թվականների պատերազմներում զոհված տղաների հիշատակին։ Երաժշտական դպրոցի տնօրենը նշում է, որ այդ օրը որոշվեց տոն դարձնել Գանձակի համար. «*Հենց 2021 թ., որ բացեցինք պուրակը, ազգաբնակչության հետ որոշեցինք, որ այդ օրը Գանձակի տոնն է ու պետք է ամեն տարի նշենք*» [ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023]։

Ցա՞վ, թե մխիթարանք. պատերազմի հուշարձանների ընկալումը։ Պատերազմի զոհերի անհատական հուշարձանների տեղադրման վայրի կամ ձևի ընտրության վերաբերյալ քննարկումները հակասական են ինչպես ծնողների, այնպես էլ համայնքների ղեկավարների շրջանում։ Մի կողմից հուշարձանները դիտարկվում են որպես զոհերի հիշատակը հավերժացնող կառույցներ՝ նշելով, որ. «*Դա այն գործն է, որ պետք է*

պահպանվի, գնահատվի, մեր համար են զոհվել» [ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, 2022], մյուս կողմից՝ հանդիպում ենք հակադիր կարծիքին, որ հուշարձանը «*հիշեցնում է տղեքին, ցավ է, ճնշող է*» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]:

Աճարկուտում զոհվածի մայրը տղայի կիսանդրու տեղադրման մասին նշում է. «*Ինձ համար ավելի հանգիստ կլիներ, որ, թեկուզ, մի հատ խաչ տեղադրվեր, կամ, չգիտեմ, սենց չլիներ: Սենց շատ դժվար է, երբ քար ես տեսնում: Շատ դժվար է, շատ ծանր է: Սկզբից ինձ թվում էր՝ չեմ ապրի էստեղ*» [ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022]:

Մյուս կողմից՝ Սիսիանում զոհվածի ծնողը խոսում է պատին տղայի նկարի սփոփող դերի մասին. «*Էդ էլ իմ միակ մխիթարանքն ա: … Հավատացեք, առաջին ժպիտը, որ իմ վրա երևացել ա, առաջին հանգստությունը, որ իմ հարազատներն են տեսել, ոնց-որ Վահագը տուն եկավ էդ նկարով: … Ծանր ա, բայց չեմ ուզում շունչը կտրեմ*» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]:

Այնուամենայնիվ, եթե 2022 թվականի ամռանը հետազոտության ընթացքում արձանագրել էինք հուշարձանի տեղադրման միայն հուզական կողմը քննարկող մեկնաբանություններ, ապա 2023 թվականին անհատական հուշարձանների տեղադրման հարցը կապվում էր նաև Հայաստանի անվտանգային խնդիրների, անորոշ միջավայրի հետ՝ հաշվի առնելով 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից իրականացրած ռազմական ագրեսիան Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ, և դրա արդյունքում հայկական կողմի ունեցած մարդկային նոր կորուստները:

«*Ես կողմ եմ ընդհանրական հուշարձաններին, ոչ թե՝ անհատական: Հիմա մենք քաղաքում ունենք Արցախյան հերոսամարտերին նվիրված հուշարձան: Ինքը ամբողջ պատերազմի ընթացքում զոհվածներին, կարող ենք ասել, որ նվիրված է, խորհրդանշում է: Որ ինչ-որ մեկի անունով ենք կառուցում, կարծում եմ, ճիշտ չի: Հիմա էնպիսի իրավիճակում ենք, լավ չի, որ ասում ենք, բայց էլի կունենանք զոհեր*» [ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023]:

Վերին Գետաշենի զբոսայգում տեղադրված է հուշարձան՝ զինվորական հանդերձանքով երեք տղաների կերպարով: Հուշարձանի վերաբերյալ համայնքի ղեկավարը և հուշարձանի տեղադրման նախաձեռնողը նշում է.

«*Եթե ավելի անկեղծ լինեմ, զուտ հաշվի առնելով, որ դեռ չգիտենք՝ ինչ է լինելու: 44-օրյայից հետո սեպտեմբերյան դեպքեր ունեցանք, ճիշտ է, փառք Աստծո, մեր գյուղից չեղավ զոհ, բայց կողքի գյուղից եղավ: Էն, որ չգիտենք՝ ինչ է լինելու: Աստված չանի, մի հատ էլ դեպք ունենայինք, էդ դեպքում ի՞նչ անեինք: … Ուղղակի փորձեցինք զոհվածների պուրակ կամ զբոսայգի էս տրամաբանության մեջ անել, էլի: Որ անհատական չլինի: Այս կիսանդրիները իրենք՝ զոհվածները չեն, ուղղակի զինվորի են*» [ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023]:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից հայկական պատմամշակութային ժառանգության, կրոնական հուշարձանների վերացմանն ուղղված քաղաքականությունը, որը չի շրջանցել նաև պատերազմների զոհերի, հերոսների հուշարձանների ավերումը և պղծումը, այդ թվում՝ Վազգեն Սարգսյանի հուշարձանի, 44-օրյա պատերազմի զոհերի հարազատները ևս իրենց մտահոգությունն են հայտնում սահմանամերձ բնակավայրերում տեղադրված հուշարձանների պահպանության վերաբերյալ։ Այսպես, Սիսիանում զոհվածի մայրը պատմում է.

«Վերջին ռմբակոծությունն էլ Սիսիանում որ եղավ (նկատի ունի 2022 թ. սեպտեմբերը), էլի ինքը (զոհվածի քույրը) ասում էր. «Ես կխելագարվեմ, եթե տեսնեմ, որ թուրքը մտել ա մեր Սիսիան, ախպորս նկարը պղծել ա»։ Հիմա մենք էլ ենք վախենում։ Սեպտեմբերից ասում եմ՝ գիշերային լուսավորությունը հանենք, անջատենք» [ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023]։

Եզրակացություններ։ Այսպիսով, 44-օրյա պատերազմից հետո և դրա արդյունքում Հայաստանի կողմից տրված մեծաթիվ զոհերի հիշատակման պետական պաշտոնական պրակտիկաներին զուգահեռ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի լոկալ իշխանությունները՝ զոհվածների հարազատների ու տեղի բնակչության ջանքերով կառուցում են սեփական տեղային հիշողության լանդշաֆտները, որտեղ պատերազմի հուշարձանները դառնում են «փոքր հայրենիքի» զավակների հերոսականությունը ներկայացնող պատումների կրողներ՝ իրենց շուրջը համախմբելով ողջ համայնքին։

Տեղադրված լինելով հանրային վայրերում՝ պատերազմի հուշարձանները դարձել են համայնքի առօրյայի կարևոր ուղեկից, որի շուրջ շարունակվում են ձևավորվել նոր սովորույթներ, համայնքային ավանդույթներ և ծեսեր։ Տեսնում ենք, որ հուշարձանների տեղադրման նախաձեռնողները հիմնականում կարևորում են այդ կոթողների կրթադաստիարակչական գործառույթը՝ պայմանավորելով նրանց տեղադրումը համայնքի ամենաբանուկ ու տեսանելի վայրերում։

Ընդ որում՝ պատերազմի զոհերի հուշարձանները համայնքի կողմից ընկալվում են ոչ թե սգի արտահայտման միջավայր, այլ վերածննդի, հուսալի ապագայի կերտման խորհրդանիշ, որը ճգնաժամային իրավիճակում պետք է սերունդներին փոխանցի հայրենիքի արժևորման գաղափարը։ Միևնույն ժամանակ, իրենց համայնքների հերոսների հուշարձանների տեղադրման ցանկությանը զուգահեռ, նկատելի է նաև սահմանամերձ համայնքների բնակիչների կողմից այդ կոթողների՝ ապագայում թշնամու տիրապետության տակ անցնելու վտանգի գիտակցումը՝ պայմանավորված նոր պատերազմի կամ սահմանազատման արդյունքում իրենց բնակավայրի կորստի վտանգով։

Գրականության ցանկ

ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2023:

ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2022:

ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2023:

ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, 2022:

ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022:

Խառատյան Լ., Շագոյան Գ., 2022, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. հետադարձ հայացք անցած 30 տարիներին, Երևան, 28 էջ:

Մարության Հ. 2006, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 89 էջ:

Մելքումյան Հ, 2017, Հիշողությունից ազգայնականությու՞ն. խորհրդային և հետխորհրդային հուշարձանները, Երևան, ՀԱԻԱ 1, էջ 42-64:

Վահագն Հովակիմյան հզոր թռիչքիդ անվարան ուղին, https://www.youtube.com/watch?v=NVpBgGbj5C0, 11.06.2024:

Ассман Ян, 2004, Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, Москва, Языки славянской культуры, 368 с.

Зубанова Л. Шуб М. 2022, Запечатленная память: социологический анализ практик коммеморации, Вестник Томского государственного университета. Культурология и искусствоведение, № 47, с. 48–60.

Поршнева О. 2005, Феномен исторической памяти о войне, Уральский вестник международных исследований, Екатеринбург, Издательство Уральского университета, вып. 4, с. 112-119.